#IDream14 ծրագիր

Դարձրու՛ երազանքդ իրականություն, մասնակցի՛ր IDream ծրագրին, ձեռք բեր բանկային ոլորտի տեսական և գործնական գիտելիքներ՝ հետագայում մեր թիմը համալրելու հեռանկարով:

Ծրագրի տևողություն՝	1.5 - 2 ամիս,
Ծրագրի անցկացման վայր՝	Բանկի բոլոր մասնաճյուղերում
Հայտարարության սկիզբ՝	Ապրիլի 22, 2025թ.
Հայտարարության ավարտ՝	Մայիսի 31, 2025թ.

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

IDream ծրագիրը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր երիտասարդի ձեռք բերել տեսական և գործնական մի շարք գիտելիքներ վաճառքի, սպասարկման ոլորտում, ինչպես նաև ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ բանկային գործում:
IDBank-ի կողմից կազմակերպված նմանատիպ կրթական ծրագրերի արդյունքում վերջին տարիների ընթացքում մեր թիմը համալրվել է շուրջ ութ տասնյակ սկսնակ մասնագետներով, ովքեր իրենց կարիերան սկսել և շարունակում են IDBank-ում:

Ծրագիրը նպատակ ունի.

- սկսնակ մասնագետներին տրամադրել տեսական գիտելիքներ ֆինանսավարկային ոլորտի վերաբերյալ,
- զարգացնել հմտություններ, որոնք անհրաժեշտ են բանկային ոլորտում սկսնակ աշխատակցին,
- ծրագրի մասնակիցներին ներսից ծանոթացնել Բանկի գործունեությանն ու կորպորատիվ մշակույթին,
- ծրագրի լավագույն մասնակիցներով համալրել Բանկում սկսնակ մասնագետների թափուր հաստիքները:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է՝

- լինել բակալավրի 4-րդ, մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողներ կամ ունենալ բարձրագույն կրթություն
- ունենալ ցանկություն ու մոտիվացիա կարիերան սկսելու թվային բանկինգի ոլորտում,
- ունենալ տրամաբանական մտածողություն,
- ունենալ հաղորդակցման լավ հմտություններ,
- օտար լեզուների /ռուսերեն, անգլերեն/ իմացությունը կդիտարկվի որպես առավելություն,
- և ամենակարևորը՝ լինել նախաձեռնող, ստեղծագործ ու նորարար գաղափարներով և ոգևորությամբ լի:

Եվ այսպես, եթե մոտիվացված ու նպատակասլաց ես, համապատասխանում ես վերոնշյալ չափանիշներին և քեզ տեսնում ես բանկային և թվային ոլորտում, ապա օգտագործի՛ր հնարավորությունդ և միացի՛ր IDBank-ի թիմին:

Ծրագրին մասնակցելու համար խնդրում ենք Ձեր ինքնակենսագրականն ուղարկել կից հղումով՝ https://idbank.bamboohr.com/careers/143:

Ծրագրի պահանջներին համապատասխանելու դեպքում ընտրված թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի: